«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

02.07.2018 10:28

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը **Ժնևի «Հայաստան» Հիմնադրամի (Շվեյցարիա)** աջակցությամբ իրականացնում է **«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագիրը Լոռու մարզում:**

Հուլիս ամսվա ընթացքում Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ և Ստեփանավան համայնքներում քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը **հայտարարում է փաստաբանների մրցույթ՝ Լոռու մարզից (նշված համայնքներից) թվով 6 փաստաբաններ ընտրելու համար:** Նշված համայնքներից յուրաքանչյուրում իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար նախատեսվում է ներգրավել երկուական փաստաբան**:**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող քաղաքացիաիրավական ուղղվածության փաստաբանները **Լոռու մարզից:**

Նախապատվությունը կտրվի Պալատի նմանատիպ ծրագրերին նախկինում չմասնակցած, ինչպես նաև համապատասխան համայնքներում գործունեություն իրականացնող փաստաբաններին:

Յուրաքանչյուր համայնքում անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար քաղաքացիների ընդունելությունը կկազմակերպվի հուլիս ամսվա ընթացքում ընդամենը մեկ անգամ առավելագույնը 6 ժամ տևողությամբ:

Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր փաստաբան կմասնակցի քաղաքացիների մեկանգամյա ընդունելությանը համապատասխան համայնքում, որի համար ծրագրով նախատեսված ծառայության վճարը կազմում է **25.000 ՀՀ դրամ** (ներառյալ հարկերը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ վճարները):

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով Ձեր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն լեզուներով՝ այն ուղարկելով lyudvik.davtyan@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը ՀՀ փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:

Դիմում-հայտի առարկայի տողում անհրաժեշտ է նշել այն համայնքը, որտեղ գործում է դիմող փաստաբանը:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի հուլիսի 10-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ:

Ծրագրի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

Հեռ.՝ 091 066 880

Էլ. փոստ՝ lyudvik.davtyan@gmail.com

Առաջարկվող նորություններ

26.10.2013ԱՆՎՃԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՕՐ



13.11.2013ԻՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

18.11.2013ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

27.11.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐԻ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })